ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

սեպտեմբերի 2020 թվականի №Ա
ք.Երևան

## «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի նոյեմբերի 30-ի №439Ա որոշմամբ «ՊՐՈՄ ՍԻՆԹԵԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Պրոմ Սինթեզ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը, ինչը, սակայն, չի կատարվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի հունիսի 1-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի հունիսի 1-ի №18 և հունիսի 11-ի №20 գրություններով Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը 2020 թվականի օգոստոսի 13-ի

№ԳԲ/34.3-Մ2-12/3446-2020 գրությամբ ներկայացրել է իր դիտարկումները՝ մասնավորապես նշելով, որ՝

- Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 11-ին տրված №ՏՊ-531-110/0603 բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանների՝ անհրաժեշտ է կառուցել 110կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան և 110կՎ լարման էլեկտրահաղորդման գիծ, որոնց նախագծային փաստաթղթերը, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման պահանջների, ենթակա են պետական համալիր փորձաքննության, ինչի վերաբերյալ ընկերության կողմից համապատասխան փաստաթուղթ չի ներկայացվել,
- Ներկայացված փաստաթղթերում բացակայում է նաև 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծի նախագիծը.

գ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի օգոստոսի 13-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

դ) Ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 17-ի №28 գրությամբ ներկայացրել է պարզաբանումներ՝ մասնավորապես նշելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման պահանջներում հստակ չէ 110կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի նախագծային փաստաթղթերի փարձաքննության ենթակա լինելու հանգամանքը, իսկ մինչև 40 հա տարածք զբաղեցնող արևային էլեկտրակայանը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, չի համարվում այն կարգի օբյեկտ, որը ենթակա է պետական համալիր փորձաքննության և/կամ հատուկ գնահատման: Ինչպես նաև հայտնել է, որ 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գիծը չի ենթադրում օդային գծի կառուցում, այլ ներանցման միջոցով օդային գծի միացում է հենարանին. նշված գծի նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության անհրաժեշտության վերաբերյալ դիմել է «Հայաստանի էլեկտրական

ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարություն, որոնց պատասխանի համաձայն՝ Կայանի նախատեսումն առանց էլեկտրահաղորդման գծի կառուցման ենթակա չէ պետական համալիր փորձաքննության: Ընկերությունը պնդել է նաև, որ հենարանին ներանցման միջոցով միացումը չի ենթադրում նախագծի կազմում, այլ որոշակի հաջորդական գործողությունների իրականացում, միաժամանակ հայտնելով, որ հարուցված վարչական վարույթի շրջանակում չեն պահպանվել ընթացակարգային պահանջները, մասնավորապես, Կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Հանձնաժողովը պետք է համապատասխան որոշում կայացնի Կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետում, ինչն ըստ էության չի պահպանվել,

ե) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

զ) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

է) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ 110

կՎ և ավելի էլեկտրահաղորդման գծերի կառուցման նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և գնահատման,

ը) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի հունիսի 1-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը: Մասնավորապես, Հանձնաժողով ներկայացված Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը չեն պարունակում 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման վերաբերյալ տեղեկություններ, և առկա չէ համապատասխան փորձաքննություն անցած էլեկտրահաղորդման գծի կառուցման նախագիծ: Ինչ վերաբերում է 110 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանը 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծին ներանցումով միացնելու վերաբերյալ Ընկերության փաստարկին, ապա, Հանձնաժողովի գնահատմամբ, նշված ներանցումը ևս ենթադրում է 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցում, հետևաբար նաև պահանջվում է համապատասխան փորձաքննության իրականացում: Սույն վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովի կողմից ընթացակարգային պահանջների չպահպանման վերաբերյալ Ընկերության պնդման առնչությամբ հարկ է նշել, որ այն անհիմն է, քանի որ Կարգի 24-րդ կետով սահմանված ժամկետները վերաբերում են էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա տրամադրելուն, ինչպես նաև կայանի կառուցման աշխատանքներից հետո լիցենզիայի պայմաններում կայանի փաստացի տեղակայված հզորությունն ու կայանում տեղակայված սարքավորումների (ագրեգատների) տվյալները արտադրության լիցենզիայում ամրագրելուն, հետևաբար հիշյալ ժամկետները սույն վարույթի շրջանակում կիրառելի լինել չեն կարող, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի հունիսի 1-ը, Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան

փորձաքննություն անցած, դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 26-ի №G10139 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 12,500,000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6,250,000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12,500,000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի հունվարի 15-ը գործողության ժամկետով:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0629 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագծի ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը.
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով, Կայանի կառուցման նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0629 լիցենզիայի գործողությունը կկասեցվի.
   3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2020թ.